



ՊԱՇՏՈՆԸ` ԱՎԱԳ ՏԵՂԱՄԱՍԱՍՅԻՆ ԻՆՏԵՆՏԸ

Աշխատանքային պարտականություններ և գործառույթներ

- աջակցում է գլխավոր ինժեներին (ԳԻ) և պատասխանատու է ծրագրի շինարարական աշխատանքների համար,
- աջակցում և վերահսկում է աշխատանքների տեխնիկական վերահսկողություն իրականացնող խորհրդատուներին և կապալառու կազմակերպություններին,
- աջակցում և վերահսկում է տեղամասային ինժեների աշխատանքը,
- ուսումնասիրում է նախագծային փաստաթղթերը և տրամադրում տեղեկատվություն անհամապատասխանությունների մասին,
- պատասխանատու է ծրագրին առնչվող տեխնիկական հարցերի, ինչպես նաև հաջորդ տրանշերի նախապատրաստական աշխատանքների համար,
- զեկուցում է ԳԻ-ին աշխատանքների առաջընթացի և ձեռքբերումների մասին,
- տեղամասային ինժեների հետ համատեղ վերահսկում է շինարարական աշխատանքների առաջընթացը և զեկուցում է վերադասին և անհրաժեշտության դեպքում տրամադրում է հաշվետվություններ,
- աջակցում է վերահսկողություն իրականացնող խորհրդատուի աշխատանքներին, ինչպես նաև կապալառուի համապատասխանելիությունը ծրագրի երաշխիքներին` համաձայն ծրագրի և վարկային համաձայնագրերի և ծրագրային այլ փաստաթղթերի,
- աջակցում է խորհրդատուների և կապալառուների հետ հանդիպումներ կազմակերպելու գործին,
- կատարում է դաշտային այցելություններ` ուսումնասիրելով տեղում իրականացվող աշխատանքների որակը, աշխատանքների իրականացման համապատասխանությունը տեխնիկական մասնագրերին և պայմանագրային դրույթներին, ինչպես նաև տեխնիկական վերահսկողություն իրականացնող խորհրդատուների աշխատանքների իրականացման, կազմակերպման և վերահսկման համապատասխանությունը ըստ պարտականությունների և պայմանագրային դրույթների,
- ուսումնասիրում է համայնքների և այլ շահագրգիռ կողմերի կողմից բարձրացված խնդիրները և ներկայացնում է համապատասխան լուծումներ,
- աջակցում, վերանայում և տրամադրում է դիտողություններ և պարզաբանումներ բոլոր նախագծերի` ներառյալ նախագծանախահաշվարկային փաստաթղթերի և այլ ուսումնասիրությունների վերաբերյալ,
- հետևում է շինարարական աշխատանքների կատարմանը, աջակցում պայմանագրի փոփոխումներին` հայտերով և/կամ դիմումներով,
- տրամադրում է անհրաժեշտ տվյալները մոնիթորինգի և գնահատման մասնագետին,
- կատարում է գործառույթից բխող և/կամ վարկային և ծրագրի համաձայնագրերում և այլ ծրագրային փաստաթղթերում նախատեսված այլ հանձնարարություններ:

Իմացություն և որակավորում`

- բարձրագույն կրթություն քաղաքացիական շինարարության (ճանապարհաշինության) և/կամ դրան առնչվող ոլորտներում,
- առնվազն 5 տարվա փորձառություն հանրային և/կամ մասնավոր ոլորտների նմանատիպ զարգացման ծրագրերի ոլորտում,
- **FIDIC** տեսակի պայմանագրերի իմացություն և փորձառություն (դիտարկվելու է որպես առավելություն),
- գերազանց հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն (գրավոր և բանավոր),
- ծանոթություն միջազգային կազմակերպությունների ընթացակարգերին (հատկապես` Ասիական Զարգացման Բանկ, Համաշխարհային Բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Եվրոպական ներդրումային բանկ, Եվրասիական զարգացման բանկ և այլ դոնոր կազմակերպություններ),
- համակարգչային գիտելիքներ (առնվազն **Word, Excel, PowerPoint, AutoCAD, Microsoft project** կամ նմանատիպ այլ ծրագիր):

Մասնագիտական հմտություններ`

- գերազանց վերլուծական և ներկայացման հմտություններ,
- դիվանագիտական և բանակցային հմտություններ,
- խնդիրների լուծման և արագ որոշումներ կայացնելու հմտություններ,
- պլանավորման և կազմակերպչական հմտություններ,
- համագործակցող/թիմակից,
- արտագնա աշխատանքային այցեր կատարելու պատրաստականություն,
- արտաժամյա և լարված ռեժիմով աշխատելու ունակություն:

Աշխատանքի պայմաններ և դրույթներ`

- Աշխատանքի պայմաններն ու դրույթները կառավարվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ քաղաքականությամբ և ընթացակարգերով և աշխատանքային պայմանագրով: